



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Լ Ո Ւ Ր Ե Ր Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ց

Ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանի ծննդյան 90-ամյակը.— Լրացավ ականավոր գիտնական, մեծ հայագետ, լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանի ծննդյան 90-ամյակը: Նշանակալի այս տարեթիվը ջերմորեն նշվեց Հայաստանի գիտական հասարակայնության և մտավորականության կողմից:

Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ գիտական նստաշրջան, որի ընթացքում կարդացվեցին դասախոսություններ մեծանուն գիտնականի գործունեության մասին, նշելով նրա մեծ ծառայությունները ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային լեզվաբանության բնագավառում:

Բազմամարդ հավաքույթ տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում: Համալսարանի ռեկտոր պրոֆ. Հ. Բատիկյանը և այլ գիտնականներ նշեցին Հ. Աճառյանի քեղմնավոր գործունեությունը հայագիտության և ընդհանուր լեզվաբանության ասպարեզում: Դասախոսներից մի քանիսը պատմեցին հուշեր Հ. Աճառյանի մասին:

Հուզիչ հանդես տեղի ունեցավ Հ. Աճառյանի անունը կրող միջնակարգ դպրոցում: Հանդեսին հրավիրված էին հանգուցյալ հոբելյարի կինը՝ տիկին Սոֆիա Աճառյանը և դուստրը՝ Քնարիկ Աճառյանը: Լեզվի և գրականության ինստիտուտներից հրավիրված գիտական աշխատողները և Քնարիկ Աճառյանը հիշողություններ պատմեցին գիտնականի կյանքից: Վերջում, դպրոցի աշակերտության ուժերով, կայացավ մեծ համերգ:

Հ. Աճառյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան նաև Երևանի այլ գիտական-մշակութային հաստատություններում, ինչպես նաև Լեհիճականում, Կիրովականում, Ալավերդում և այլ վայրերում:

«Դիվան հայ վիճագրության».— Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիան ձեռնամուխ է եղել հայ վիճագիր արձանագրությունների հրատարակությանը, որը լինելու է բազմահատոր:

Հայաստանի գիտնականները մինչև այժմ հայտնաբերել են ավելի քան 10 000 վիճագիր արձանագրություններ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում մեր ժողովրդի անցյալ պատմության վերաբերյալ: Բոլոր այդ արձանագրությունները հրատարակվելու են:

Արդեն լույս է տեսել «Դիվան հայ վիճագրության» ժուլյալածուի առաջին հատորը, որի մեջ գետնդրված են 250 արձանագրություններ, հայտնաբերված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կողմից 1910—1915 թվականներին Անիի պեղումների ժամանակ, երբ Հ. Օրբելին պաշտոնավարում էր Նիկոլա Մատի արշավախումբի իրեն արձանագրող: Արժեքավոր այդ վիճագրությունները պարունակում են տեղեկություններ Անիի տաճարների, պալատների, կամուրջների, քաղաքի պարիսպների, ջրանցքների կառուցման վերաբերյալ: Դրանք յուրովի արխիվային փաստաթղթեր են հագրատուժաց մայրաքաղաքի սնունտական և մշակութային կյանքի վերաբերյալ:

Նոր աշխատություն Մոսկես Խորենացու մասին.— Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի հրատարակությանը լույս է տեսել երիտասարդ պատմաբան Հ. Սարգսյանի աշխատությունը, որը կոչվում է «Մոսկես Խորենացու «Հայոց պատմության» խրոնոլոգիական սխեմա»:

Ուսումնասիրելով պատմահոր աշխատության խրոնոլոգիան (ժամանակագրությունը), հեղինակը აღում է, որ Խորենացու խրոնոլոգիան խիստ արժեքավոր է: Ուսումնասիրության շնորհիվ հեղինակին հաջողվել է Խորենացու խրոնոլոգիական սվայաները վերածել պատմական լիարժեք աղբյուրների:

Երիտասարդ գիտնականը, հայտնաբերելով «Հայոց պատմության» խորհրդով հավան սխառնի ստեղծման սկզբունքները, փորձում է ապացուցել, որ Խորենացու աշխատությունը կարող էր լինել միմիայն Ե դարի Հայաստանի պատմական զարգացման արդյունք և որ Խորենացին եղել է ճույն դարի հայ մտավորականության փայլուն ներկայացուցիչներից մեկը:

Արժեքավոր աշխատություն Լեհաստանի հայ գաղութի պատմության մասին.— Լյուբլինի համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել լեհերեն լեզվով հայագետ Միրոսլավա Զարբեակա-Ռոբասովայի մի հետազոտական աշխատությունը, որի վերնագիրն է «Հայերը Զամոսիայում և նրանց դերը Լեհաստանի և Արևելքի միջև առևտրական և մշակութային կապերի մեջ»:

Գիրքը արժեքավոր աշխատություն է Լեհաստանում հայ գաղութի կազմավորման և կյանքի մասին: Այն ընդգրկում է ԺՋ դարի վերջերից մինչև ԺԸ դարի սկիզբի ժամանակաշրջանը: Աշխատության մեջ հանգամանորեն տրված է Լեհաստանի հայկական գաղութի, հատկապես Զամոսիա քաղաքի հայերի հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի պատկերը: Ծանկան են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հայերի կատարած դերին՝ Լեհաստանի և Արևելքի մշակութային փոխհարաբերությունների մեջ:

Իր աշխատությունը գրելիս հեղինակը լայնորեն օգտվել է Կրակովի, Վարշավայի և այլ թաղաքների արխիվներից:

«Հայաստան» տարեգիրք.— Երևանի հանրային գրադարանի և գիտությունների ակադեմիայի գրադարանները ձեռնամուխ են եղել պարբերական տարեգրքի հրատարակության: Տարեգիրքը կոչվելու է «Հայաստան»: Այն պարունակելու է Հայաստանի և հայերի մասին ամեն տարի տարբեր լեզուներով հրատարակվող գրականության ցանկը և առավել արժեքավոր հրատարակությունների կամ հոդվածների համառոտակի բովանդակությունը:

Առդեն լույս է տեսել տարեգրքի առաջին գիրքը, որն ընդգրկում է 1883 թվականի նյութերը: Հատորն ունի 10 գլուխ, ուր տրված են բիրիոգրաֆիական տեղեկություններ Հայաստանի ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության, հասարակական կյանքի վերաբերյալ ավելի քան 8 000 գրքերի և ամսագրային հոդվածների մասին, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ Սովետական Միության մյուս հանրապետություններում:

Նկարիչ Մհեր Աբեղյանի ցուցահանդեսը.— Նկարիչների տանը բացվել է Հայաստանի ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացված են նկարչի 80 տարվա աշխատանքների լավագույն գրաֆիկական գործերը, որոնցում վարպետությամբ պատկերված են հայրենի բնաշխարհը, մեր երկրի մարդիկ, նրանց առօրյան: Մի շարք գործեր նվիրված են պատերազմին և խաղաղությանը:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրությամբ է դիտվում Երևանի արվեստասեր հասարակության կողմից:

Հայկական գորգեր.— Տարեցտարի լայն ճանաչում են գտնում հայկական գորգերը, թե՛ Սովետական Միության և թե՛ արտասահմանյան երկրներում: Վերջին տարիներս հայկական գորգերը ցուցադրվել են համամիութենական և միջազգային բոլոր արդյունաբերական ցուցահանդեսներում ամփոփր:

«Հայգորգ» ֆիրման ներկայումս պատրաստվում է մի նոր միջազգային ցուցահանդեսի, որը տեղի է ունենալու Կանադայում: Ֆիրման ցուցահանդեսին կներկայացնի «Կիլիկիա», «Եստրոնգի» և այլ առուններով նոր գորգեր, որոնց նխագծերը պատրաստել են հայ մասնագետ գորգագործ նկարիչները:

Բարեկամության թատրոն.— Հայաստանի թատերական ընկերության նախանձեռությամբ Երևանում կազմակերպվել է մի նոր թատրոն, որը կոչվում է «Բարեկամություն»: Այս նախաձեռնության համար հատկացված է Սուհուրկյանի անվան թատրոնի շենքը:

Ապրիլի կեսերին տեղի ունեցավ թատրոնի բացումը: Երկու օր շարունակ հանդես եկան Մուսկլայի Փոքր թատրոնի (որը հնագույն դրամատիկ թատրոն է Ռուսաստանում) մի խումբ ակադավոր դերասաններ և դերասանուհիներ: Նրանք խաղացին հատվածներ Գրիբոյեդովի «Նուկլիցի պատուհաս», Օստրովսկու «Գալլեր և ոչխարներ», Լերմոնովի «Դիմակահանդես» և ժամանակակից ռուս հեղինակների գործերից: Լեի-լեցուն դահլիճը բացառիկ ջերմությամբ ընդունեց ռուս բեմի վարպետների ելույթները:

Առաջիկայում հանդես են գալու Մուսկլայի, Լեհինգրադի, Ուկրաինայի, Մեքսիկայի երկրների և Անդերկովկասյան հարևան հանրապետությունների լավագույն թատրոնների ներկայացուցիչները:

Երիտասարդության տուն.—Այս տարի Երևանում սկսվելու է երիտասարդության տան կառուցումը: Դա լինելու է մի նոր, հույակերտ շենք, մայրաքաղաքի տեսարժան վայրերից մեկը: Տունը կառուցվելու է ուսանողական թաղամասում, Քանաքեռի արալանջի ստորոտում:

Շենքը կներկայացնի երիտասարդական ակումբ, ժամանցի վար: Այն կունենա երաժշտական, գրական, լուսանկարչական սպորտներ, բազմաթիվ խաղասենյակներ, ժամանցի սրահներ: Հանդիսասրահը, որը կունենա 1 000 տեղ, կծառայի ժողովների, ներկայացումների, համերգների ու կինոցուցադրումների համար: Շենքը կունենա մեծ լողալազան իր սրահարանով (սույարի), բակետրոլի, վոլեյբոլի և թենիսի հրապարակներ:

Երիտասարդության տան բաղկացուցիչ մասն է կազմելու 14 հարկանի հյուրանոցը, 500 հոգու համար: Այն կունենա իր սրճարանը, ռեստորանը և հանգստի բոլոր հարմարությունները:

Շենքի դահլիճներից մեկը, որն ամենից շքեղն ու գեղեցիկն է լինելու, ծառայելու է իբրև պամկարդության դահլիճ:

Քիմիական հակազդիչների գործարան.— Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում վեր են քարձրացել քիմիական հակազդիչների (ոնեակտիվների) խոշոր գործարանի շենքերը: Արտադրամասերից մի քանիսը արդեն գործում են, մյուսները կառավորվում են, իսկ մեծ մասը դեռ կառուցման ընթացքի մեջ է: Պատրաստի արտադրամասերը աչքի են ընկնում իրենց բացառիկ մաքրությամբ. կարծեք գործարան չէ, այլ պալատ:

Այս գործարանն իր տեսակի մեջ խոշորագույններից մեկն է լինելու Սովետական Միության մեջ: Այն արտադրելու է մի քանի հարյուր տեսակ օրգանական քիմիական հակազդիչներ, որոնք գործ են ածվում արդյունաբերական ամենատարբեր ճյուղերի մեջ և տեխնիկական կարիքների համար: Գործարանն արդեն մի քանի տեսակի արտադրանք է տալիս, որոնց թվում գինեթթու:

Գործարանն իր ամբողջ կարողությամբ կսկսի աշխատել 1967 թվականին:

Երևանի քաղաքային տնտեսությունը 1966 թվականին.— Ընթացիկ տարում Երևանն ավելի կքարեկարգվի ու կծառայալատվի: Կառուցվելու և օգտագործման է հանձնվելու 284 000 քառակուսի մետր բնակարան, 8 դպրոցական նոր շենքեր, ավտոշտվելու է համալսարանի նոր շենքերի կառուցումը:

Մինչև աշուն կառուցվելու են «Արմենիա» հյուրանոցի երրորդ մասը, Նորթի ճոպանուղին, քաղաքային ձմեռային լողավազանը, Երևանյան լճի առաջին հատվածը: Բացվելու են 6 նոր բանուկ փողոցներ և բարեկարգվելու է 15 փողոց: Ասֆալտապատվելու է 1 000 000 քառակուսի մետր տարածություն:

Բարելավվելու է ջրամատակարարման գործը: Զրմուլի ցանցը կընդարձակվի 25 կիլոմետրով: Մինչև հունիս կավարտվի Կապույտ լճից սկիզբ առնող ջրատարի կառուցումը, որով քաղաքին տրվող ջրի քանակությունը կավելանա վայրկյանում 1 500 լիտրով: Կոյուղին կընդարձակվի 25 կիլոմետրով:

Գազամատակարարման գործը ևս լայն մտահոգության առարկա կլինի: Գազամուղի ցանցը կընդարձակվի 25 կիլոմետրով: 19 000 բնակարաններ և 45 խոշոր կաթսայատներ կստանան գազ:

Երևանյան լիճը.— Ծարունակվում են Երևանյան լճի կառուցման աշխատանքները: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Հրազդանի ձորը փակող հողապատնեշի կառուցման վրա: Այդ պատճառով կունենա 450 մետր երկարություն, 30 մետր բարձրություն: Պատնեշի ստորին մասի լայնքն է 150 մետր, իսկ վերի մասինը՝ 80 մետր, որը և լինելու է պատնեշի վրայով անցնող ապագա փողոցի լայնքը:

Պատնեշի կառուցումը այս տարի կավարտվի, որով բնական հսկա փոտրակը կլցվի ջրով և կգոյանա

լիճ, որը կունենա մեկ կիլոմետր երկարություն, 750 մետր լայնություն և կգրավի 65 հեկտար տարածություն: Լճի միջին խորությունը կլինի 18 մետր, տարողությունը կկազմի 6 000 000 խորանարդ մետր ջուր:

Փոստրակում ընկած Նոր Կողբ գյուղը այս տարի տեղափոխվելու է դեպի Ծառույթյան, ուր գյուղացիների համար կառուցվում են բազմաբարկ շենքեր:

Լճի ափերին հետազայում կստեղծվեն լողավայրեր, գրոսայգիներ և հանգստավայրեր:

Հողապատնեշի հետ զուգընթաց կառուցվում է ապագա նոր փողոցը, որն անցնելով պատնեշի վրայով, իրար կկապի քաղաքի Լենինյան և Ծառույթյան շրջանները:

Դիլիջանի զարգացման հետևակարները.— Տարեցտարի բարեկարգվում ու մեծանում է Դիլիջանը, Հայաստանի այդ գեղեցիկ ամառանոցային քաղաքը, որը միևնույն ժամանակ հիանալի բուժավայր է: Զով ամառը, մեղմ ձմեռը և հանքային բուժիչ ջրերը հեռավորություն են ընձեռում, որ առաջիկայում Դիլիջանը դառնա Սովետական Միության նշանավոր բուժավայրերից մեկը:

Քաղաքում լայն թափով կատարվում են շինարարական աշխատանքներ: Ծայրամասերին ստաջացել են նոր թաղամասեր: Վերակառուցվում է քաղաքի կենտրոնը: Բացվում են նոր, լայն ու բարեկարգ փողոցներ, կառուցվում են նոր հանգստյան տներ, հյուրանոց-պանսիոնատներ, հասարակական-մշակութային շենքեր, մարզական հյուսարակներ: Հունիսից կսկսի գործել մի նոր խոշոր սանատորիա:

Նախատեսված է հետազայում սանատորիաներն ու բուժական շենքերը կենտրոնացնել մի տեղ, քաղաքից հեռու, որի համար անտառների խորքում հատկացված է հատուկ մի չքմաղ վայր:

Ընթացիկ տարում Դիլիջանի զարգացման ու բարեկարգման վրա ծախսվելու է 5 անգամ ավելի գումար, քան 1958 թվականին և 20 տոկոսով ավելի քան անցյալ տարի:

Քար մշակող նոր մեքենա.— Քար կտրող և հղկող շատ մեքենաներ կան Հայաստանի տարբեր կառույցներում: Այդ մեքենաները նախագծվել են մեր ինժեներների կողմից ու պատրաստվել Լենինականի հաստոցաշինական գործարանում: Վերջերս նույն գործարանը թողարկեց գրանիտ ու մարմար կտրող մի մեքենա, որը հաջողությամբ փորձարկվեց թե՛ մեզ մոտ և թե՛ Մոսկվայում ու արժանացավ ընդհանուր հավանության: Կտրելու գործողությունը կատարվում է ոչ թե այդ նպատակի համար մինչև այժմ գործածվող սղոցի, այլ ավաստի սկավառակի միջոցով, որով գործողությունը վեց անգամ ավելի արագ է կատարվում, քան սովորական ձևով:

Այս մեքենայի օգնությամբ մարմարե և գրանիտե ալիկներ են կտրատվելու շինարարության համար:

